Դանիել Վարուժան

Ամբարներ

Տընակին մեջ մրթըշաղ, կըտուրին տակ հայրական.
Ամբարնե՛րն են, շար ի շար, նոր բերքերով ծոցվորած:
Իրենց լայնշի արգանդեն՝ թանձր բույրերը կու գան
Աշուններուն պըտղալից և արտերուն մանգաղված:

Հո՛ն է վիգը թըխահատ, հո՛ն է գարին իլաձև.
Հո՛ն, քամվելով ակոսեն ու հոսելով սարն ի վար
Ցորյանն հեղե՛ղ է կազմեր: Անոնք ոսկի և արև
Գըրկած կարծես թե ըլլան արշալույսներ ամպածրար:

Գերաններեն ծըխապատ, և մենավոր պատերեն
Սարդն անոնց վրա է փըռեր պատմուճանները մոխրոտ:
Մերթ անոնց վրա կը ցաթե շեշտակի լույս մը վերեն
Տատամսելե վերջ երկա՛ր շուրջն երդիկին արևոտ:

Անոնք իրենց ծոցին մեջ գանձերն հողին ծըրարած՝
Կարծես լըռիկ կը հեգնեն ձըմեռն ու սովը վաղվան…
Իրենց առջև, մըշտարթու, թավ պոչին մեջ ծըվարած,
Կը հըսկե տանը կատուն, Համբարուի մը նըման: